

Կանոնակարգ

«RAFO CUP» 2021՝ Ռաֆայել Թորգոմյանի անվան առաջին հուշամրցաշար

Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները

Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հետ համատեղ անցկացվող RAFO CUP հուշամրցաշարի կազմակերպման և անցկացման սկզբունքները, ընթացակարգային հարցերը տվյալ առաջնության ընթացքում:

Կանոնակարգի խնդիրներն են՝

- ա) RAFO CUP հուշամրցաշարի կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը,
- բ) հուշամրցաշարի մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը:

Հուշամրցաշարի նպատակներն ու խնդիրները

Մրցումների նպատակն է՝

- ա) հարգանքի տուրք մատուցել պատերազմում զոհված Ռաֆայել Թորգոմյանի և բոլոր հերոսների հիշատակին,
- բ) «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը և կենսագործմանը նպաստելը:

Մրցումների խնդիրներն են՝

- ա) RAFO CUP հուշամրցաշարին մասնակցող թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների,
- բ) հուշամրցաշարի արդյունքներով չեմպիոնի և այլ մրցանակակիրների որոշումը,
- գ) հուշամրցաշարի մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝
 - RAFO CUP հուշամրցաշարի ռմբարկու,
 - RAFO CUP հուշամրցաշարի լավագույն ֆուտբոլիստ,
 - RAFO CUP հուշամրցաշարի լավագույն դարպասապահ,
 - RAFO CUP հուշամրցաշարի լավագույն գոլի հեղինակ,
 - այլ մրցանակակիրներ:

Պարգևատրումը

Եզրափակիչ խաղի ավարտից հետո տեղի է ունենում պարգևատրման արարողություն:

RAFO CUP հուշամրցաշարի չեմպիոն թիմը պարգևատրվում է RAFO CUP չեմպիոնական գավաթով:

Հուշամրցաշարի առաջին 3 տեղերը գրաված թիմերի բոլոր ֆուտբոլիստները պարգևատրվում են համապատասխանաբար բրոնզե, արծաթե և ոսկե մեդալներով:

Մրցանակներով պարգևատրվում են մրցաշարի լավագույն ֆուտբոլիստը, լավագույն ումբարկուն, լավագույն դարպասապահին ու լավագույն գոլի հեղինակը: Շնորհվում են նաև այլ խրախուսական մրցանակներ:

Մրցաշարի անցկացման վայրը

Մրցաշարն անցկացվում է Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտերում:

Մրցաշարի անցկացման կարգը և մասնակիցների տարիքը

Մրցաշարին մասնակցում են 2008-2009թթ. ծնված ֆուտբոլիստները:

Մրցաշարի խաղերն անցկացվում են ստանդարտ ձևաչափով՝ 11 vs 11 :

Խաղերի տևողությունը՝ 50 րոպե, խաղակեսերից յուրաքանչյուրը՝ 25 րոպե, խաղակեսերի միջև ընդմիջումը՝ մինչև 10 րոպե:

Մրցաշարի հանդիպումներն անցկացվում են 4-րդ համարի գնդակով:

Խաղացանկն ու անցկացման ժամկետները

«RAFO CUP» 2021-ի անցկացման ժամկետներն են օգոստոսի 23-ից 25-ը ներառյալ:

Մրցաշարին մասնակցում են 8 թիմեր, որոնք վիճակահանությամբ բաժանվում են 2 խմբի՝ A և B:

Խմբերում առաջին 2 տեղերը գրաված թիմերը կիսաեզրափակիչ հանդիպումներում մրցում են 1-ին և 3-րդ տեղերի համար, իսկ խմբերում վերջին 2 տեղերը գրաված թիմերը նույն սկզբունքով մրցում են 5-8-րդ տեղերի համար:

Օգոստոսի 23՝ մրցաշարի խմբային փուլի 1-ին մրցափուլի հանդիպումներ:

Օգոստոսի 24՝ մրցաշարի խմբային փուլի 2-րդ և 3-րդ մրցափուլի հանդիպումներ:

Օգոստոսի 25՝ կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլեր՝

- 1-ին խաղ՝ A3 vs B4 (կիսաեզրափակիչ),
- 2-րդ խաղ՝ A4 vs B3 (կիսաեզրափակիչ),
- 3-րդ խաղ՝ A1 vs B2 (կիսաեզրափակիչ),
- 4-րդ խաղ՝ A2 vs B1 (կիսաեզրափակիչ),
- 5-րդ խաղ՝ A3 vs B4 - A4 vs B3 պարտվողներ (7-րդ տեղի խաղ),
- 6-րդ խաղ՝ A3 vs B4 - A4 vs B3 հաղթողներ (5-րդ տեղի խաղ),
- 7-րդ խաղ՝ A1 vs B2 - A2 vs B1 պարտվողներ (3-րդ տեղի խաղ),
- 8-րդ խաղ՝ A1 vs B2 - A2 vs B1 հաղթողներ (եզրափակիչ):

Խաղերի անցկացման կարգը

Հանդիպումներն անցկացվում են՝ համաձայն ԻՖԱԲ «Ֆուտբոլ խաղի» կանոնների և սույն կանոնակարգի:

Խաղերի սպասարկումն իրականացնում են ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի կողմից նշանակված մրցավարներն ու տեսուչը:

Մրցաշարին մասնակից թիմերի դասակարգումը մրցաշարային աղյուսակում

1. Խմբային փուլում մրցաշարային աղյուսակում թիմերը դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղի արդյունքներով գրանցած հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:
2. Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝
 - ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,

բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,

դ) մրցաշարի խմբային փուլի բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,

ե) մրցաշարի խմբային փուլի բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

զ) մրցաշարի խմբային փուլում ստացել է ավելի քիչ կարմիր քարտ,

է) մրցաշարի խմբային փուլում ստացել է ավելի քիչ դեղին քարտ,

ը) ընտրվել է վիճակահանությամբ:

3. Կիսաեզրափակիչ փուլում եթե լրացուցիչ խաղաժամանակում խաղն ավարտվում է ոչ ոքի, ապա նշանակվում է հետխաղյա 11 մետրանոց հարվածաշար:
4. 7-րդ, 5-րդ, 3-րդ տեղերի համար խաղերն ու եզրափակիչը անցկացվում են կիսաեզրափակիչ փուլի ձևաչափով: